ԺՈՒԺԿԱԼ ԹԱԳՈՒՀԻՆ ՈՒ ԻՐ ԵՐԵՔ ՏՂԻ ՀԵՔԻԱԹԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ժամանակով մի թաքավոր ունենում ա մի մինուճար աղջիկ։ Էդ աղջիկը շատ սիրուն ա ըլնում, խելոք, նամուսով։ Նրա սիրտն էլ շատ բարի ա ըլում, ու նա միշտ փախչելիս ա ըլում աշխարքի վայելչությունից։ Երբ էդ աղջիկն հասակն առնում ա, պալատականները խորհուրդ են տալիս թաքավորին, որ իր աղջկանը մարդու տա, մի լավ տղի հետ պսակի, որ աշխարքը թաղաժառանգ ունենա, քանի որ թաքավորն էլ ծերացել ա։ Թաքավորն էդ բանին համաձայնում ա. գնում ա աղջկա կուշտն ու առաջարկում՝ իրան հարմար մի փեսացու ընտրել։ Թաքավորի աղջիկը խոնարությունով ասում ա հորը, որ ինքը միտք չունի աշխար մտնելու։ Թաքավորն էլ շատ սիրելուց իր աղջկա խաթրիցը չի ուզում ըլիլ ու շատ էլ ստիպում չի։ Անցնում ա մի քիչ ժամանակ։ Պալատականներն էլ եդ թաքավորի տեղը նեղում են՝ իր աղջկանը մարդու տալու։ Էս անգամ էլ թաքավորի աղջիկը էդ բանը մերժում ա։ Վրա իրեք անգամ պալատականները թաքավորի տեղը սաստիկ նեղում են, որ իր աղջկան անպատճառ մարդու տա, որ թաքավորի մահից հետո աշխարքը անտեր չմնա։ Թաքավորը շատ խնդրում ա աղջկանը, որ իր ծերությանը խնայի, մի լավ տղի ուզի, հետը պսակվի, հորը, մխիթարի։ Թաքավորի աղջիկը ճարահատ, էլ չուզելով իր ծեր հոր սիրտը կոտրել, համաձայնում ա, միայն ասում ա.—Ես կուզեմ էն տղին, որ համաձայնի տարենը մեկ անգամ միայն իմ անկողինը գալ։

Էս բանը հայտնում են աշխարի բոլոր ջահել տղերանցը։ Բոլոր իշխանազունները, աշխարքի բոլոր հարուստ տղերքը հրաժարվում են էդ պայմանից։ Ոչ ով չի ուզում թաքավորի աղջկանն ուզել։ Միայն մի նախրչու տղա ասում ա. «Ես կուզեմ»։

— Ինչո՞ւ,— ասում ա,— թե որ թաքավորի աղջիկն էդքան համբերող ու նամուսով կըլի, ես խի՞ չեմ ըլիլ, ախպեր, ես էդ պայմանին համաձայն եմ. ես նրան կուզեմ։

Էդ բանը հայտնում են թաքավորին։ Սա էլ հայտնում ա իր աղջկանը։

— Թաքավորն ապրած կենա,— ասում ա աղջիկը,— երբ որ քո սաղ աշխարքի ջահել ազափ տղերանց մեջ մենակ մի նախրչու տղա ա գտնվել, որ սրտով իմ պայմանին համաձայնվել ա, ես էլ ուղուր սրտով նրան կուզիմ։

Նախրչու տղին բերում են պալատ, շորերը փոխում, թաքավորավայել շոր հաքցնում ու տանում թաքավորի աղջկա կուշտը։ Սա էլ շատ հավանում ա նրան։ Նրա խոսք ու զրիցից ձեռաց հասկանում ա, որ էդ տղեն համ շատ խելոք ա, համ էլ շատ համբերող ու նամուսով։ Նրանց պսակում են։ Թագի տակին երկուսն էլ իրար խոսք են տալի, երդվում են, որ իրանց պայմանին հաստատ կմնան, տարենը մի անգամ մենակ իրար մոտ կգան, տարենը մի անգամ մենակ իրար հետ անկողին կմտնեն։

«Ով որ մեզանից,— ասում ա,— էս երդումը քանդի, թող աստոծ էն ոոպեին նրա մեջքը կոտրի»։ Ասում են ու իրանց խոս՞քին հաստատ մնում։ Պսակից եդո առաջին գիշերը թաքավորի աղջիկն էրկու հոգիանում ա։ Մեր թագավորը շատ ուրախությունից հրաժարվում ա գահից, ու նրա տեղը թաքավոր ա նստում իրան փեսեն՝ նախրչու տղեն։ Սա էնպես խելքով ու իմաստությունով կառավարում ա երկիրը, որ բոլոր ժողովուրդը սրտով սիրում ա, պատվում ա նրսն։ Թաքուհին էլ դառնում ա նրա գլխավոր խորհրդատուն ու հավատարիմ ընկերը։

Պսակվելուց ինն ամիս, ինն օր, ինն սահաթ եդը թաքուհին պառկում ա ու մի սիրուն տղա բերում։ Ծեր թաքավորն իրան թոռի թուշը պաչում ա ու եդո մեռնում։ Թաքավորն ու

թաքուհին իրենց տղի կնունքը ու հոր մահանելը մին են անում։ Աշխարհն էլ մասնակցում ա նրա ուրախությանն էլ, տխրությանն էլ, կատարում են թոռի կնունքը, պապի՝ թաղումեքը։ Նախրչու տղա թաքավորը, էդ օրը մի չլսված թրահմըն ա անում ժողովրդին։ Բոլոր մեղավոր մարդկանցը բանդից ազարտում ա, ներումն ա շնորհում, ժողովրդի խարջը պակասացնում, աղքատներին ու խեղճերին էլ բոլ փող արծաթ ու ոսկի փայ անում։ Մի խոսքով, սաղ աշխարք մի օրվա մեջ հա՛մ տխրում ա, հա՛մ ուրախանում՝ կնունքն ու մահանեքը մի օր են անում։
Վրա երկրորդ տարին թաքուհին պառկում ա, բերում էլի մի սիրուն տղա։ Աշխարքն էլի իրանց սիրած թաքավորի ու թաքուհու հետ ուրախանում ա։ Ամենքը խոսում են նրանց բարի գործերի մասին. տուն չի ըլում, որ թաքավորի ու թաքուհու լավությունը տեհած չըլի։ Ամենքը միալար ու միաբերան ասում են.— Կեցցեն, շատ ապրեն մեր թաքավորն ու թաքուհին, որ իրանց բարի գործերի հետ էլ մաքուր ու անարատ կյանք ունեն։ Նրանց տունը սուրփ ա, անկողինք սուրփ ա։
Էդ վախտն էր՝ որ մի րիգուն իրեք ջահել տղա մի գինետնում քեֆ ին անում։ Նրանք փչացած տղերքին ու թուլիբաշի։
Նրանցից մինն ասավ.— Ես կյանքումս բախտավորություն ասած բանին հավատում չեմ. էս մեր թաքավորի ու թաքուհու բախտավորությունն էլ երկար չի քաշիլ։ Ասում են թաքավորը տարին մեկ անգամ ա գնում թաքուհու անկողինը, էդ ո՞նց կլինի։
— Էդ շատ դրուստ ա,— ասում ա մյուսը,— ըսօր ինձ ասին, որ էս քշերն ա վաղեն, երբ թաքավորը գնալ պտի թաքուհու անկողինը։
Տղերք մի բան անց կացավ մտքովս,— ասավ երրորդը՝ սատանի ծիծաղն էրեսին,— ես էս քշեր գնալ պտեմ թաքավորին ու թաքուհուն խափիլ, նրանց բախտավորությունը քանդիլ, թե էդ բանը չանեմ, բաս ես՝ ես չըլեմ։
Նրանք թե, «Ընչացո՞ւ ես դուն, ի՞նչ քու խելքի բանն ա, որ էդ անես»։
Նա թե՝ «Ես էդ բանը թե գլուխ չբերեմ, ինձ շուն կանչեցեք»։ Ու մարջ են գալի։
Սատանեն վեր ա կենում գնում պալատ, դուռը ծեծում ու ասում, որ ինքը շատ հարկավոր գործով ուզում ա թաքավորին տենի։ Ներս են թողում, գնում ա բարեսիրտ թաքավորի աղաքին չոքում ու լեզու ածում։
— Տեր թաքավոր, աչիդ ու գլխիդ մատաղ. ես մի անբախտ տղա եմ։ Հերս հարուստ բեզրգյան էր։ Ես ջահել ի, որ նա մեռավ։ Մեր թշնամիքը ու սուտ բարեկամները մեր հարստությունը կերանք, թալանեցին։ Ես մնացի խեղճ ու ողորմելի։ Հմի մի սիրուն աղջիկ եմ սիրել, գնալ պտեմ էս քշեր կուշտը, նշան տալ։ Ամա էս շորով ամանչում եմ գնամ։ Խնդրում եմ քու հին շորերից մի ձեռք տաս հաքնիմ, գնամ սիրածիս կուշտը։ Ու եդ բերեմ, շորերը քեզ կտամ։
Թաքավորը խղճահարվում ա, իրա շորերից մի ձեռք տալիս ա։
Էդ տղեն հաքնում ա, գնում, թաքավորի ղըլըղով ու անումով թաքուհուն խափում, անկողինը պղծում ու եդ գալի, շորերը տալի թաքավորին ու ասում.— Շնորհակալ եմ, թաքավոր, միայն ափսոս բանը գլուխ չեկավ։
Ասում ա ու կորչում։ Անց ա կենում մի երկու սըհաթ, թաքավորը վեր ա կենում գնում թաքուհու կուշտը։ Դուռը ծեծում ա։
Թաքուհին ձեն ա տալի.— Ի՞նչ մարդ ես, ո՞վ ես։
Թաքավորը թե.— Իմ անգին թաքուհիս, ես եմ, դուռը բաց արա։
Թաքուհին դռան ետևից ասում ա.— Թաքավոր, ինչ էլավ քեզ դու չէի՞ր, որ մի երկու սըհաթ աղաք էկար իմ կուշտը։

Թաքավորն ամեն բան գլխի ա ընկնում. տենում ա, որ միամիտ թաքուհին իր շորերին խափվում ա, ու էդ բանի պատճառն էլ ինքն ա, ձեն ա տալի.— Վա՛յ մեջքս, մեջքս, մեջքս կոտրեց։
Ասում ա ու վեր ընկնում։
Թաքուհին վազում ա, դուռը բաց անում ու տեսնում՝ դրուստ որ թաքավորի մեջքը կոտրել ա։
— Իմ անգին թաքուհիս,— ասում ա թաքավորը,— քեզ շատ սիրելուց համբերությունս հատավ ու երկրորդ անգամ էկա քու կուշտը։ Դրա համար աստոծ ինձ պատժեց ու մեջքս կոտրեց։ Ինձ օգնիր, սիրելիս։
Թաքուհին վրա ա ընկնում, մարդին պաչպչորում, ճակատը պաչում ու աղի արտասունք թափում։ Հավար ա կանչում, գլխին վայ տալի։ Պալատականները գալիս են, թաքավորին տանում, բժիշկնի կանչում, դեղ ու դարման անում, բայց բան չի դառնում։ Ժամանակն անցնում ա ու թաքուհին չոքում ա, բերում վրա երրորդ տղեն։ Խաբարը տանում են հիվանդ թաքավորին։ Խեղճին աչքալիս են տալի թաքուհու կողմից։
Թաքավորը մի գիր ա գրում թաքուհուն էս խոսքերով.— Ես իմ իրեք որդիներից մեկին զրկում եմ ժառանգությունից։
Տակին ձեռք ա քաշում։ Թաքավորական միրով միրում ու հոգին փչում ա։ Սաղ աշխարքը սուք ա անում թաքավորի վրա։
Ամենքը մի բերան էն ին ասում.— Լսին փայ ըլի. է՛, դրուստ որ աշխարքում բախտավորություն չկա...
Թաքավորի մահը շատ ծանդր էր թաքուհու համար։ Սա շատ երկար սուգ ա անում նրա վրա։ Մինչի իրան տղերանց հասնիլը, թաքուհին թախտ ա բարձրանում ու երկիրը կառավարում։ Ուշք ու միտքը գցում ա իր իրեք տղի վրա, որ մինը մնուց լավն են ըլում՝ խելոք ու սիրուն։ Սրանց հավասար սիրով կրթում ա ու մենձացնում, ուսում ա տալի, շնորք սովորացնում։ Միայն շատ անգամ էն միտքն անում, թե ի՞նչ էր պատճառը, որ թաքավորը զրկեց իր երեք որդիներից մեկին ժառանգությունից և որի՞ն արդյոք։ Թաքավորի մեջքը կոտրիլն էլ նա վերագրել էր նրա իրան անչափ սիրելուն. թաքավորը՝ սիրուց բորբոքված, դրժել էր իր երդումը։ Բայց էլի վախտ-վախտ մի թաքուն կասկած կրծում ա նրա սիրտը։ Միտք ա անում... ու գլխի չի ընկնում, թե ի՞նչն էր պատճառը։
Ժամանակն անց ա կենում։ Տղերքը մենծանում են, հասնում։ Երբ դառնում են մենձը՝ քսանմեկ, միջնեկը՝ քսան, իսկ պուճուրը տասնին տարեկան, էն վախտը հարց ա ըլում, թե դրանցից ո՞վ պտի հոր թախտը նստիլ։ Տղերանցը նոր իմացնում են իրանց հոր վասիաթի[1] միտքը։ Ու ոչ մի հնարքով չի կարենում գաղտնիքը լուծել, թե իրեք եղբայրներից ո՞րն ա զրկված ժառանգությունից։
Հավաքում են էդ աշխարի գիտնական իմաստուն մարդկանց ու նրանց հարց անում։ Ոչով կարում չի իմանալ, թե թաքավորի տղերանցից ո՛րն ա զրկված ժառանգությունից։ Բոլոր գիտնականները մաթ են մնում (ապուշ են կտրում)։ Խորհուրդ են տալի, որ թաքավորի տղերքը վեր կենան, գնան Եվրոպի[2] թաքավորի կուշտը.— Էն թաքավորն,— ասում են,— մենձ իմաստուն ա, կարելի ա մի բան գլխի ընկնի, մի ճամպա շանց տա։
Թաքավորի իրեք տղեն էլ վեր են կենում ու ճամպա ընկնում։ Ժամանակն էլ գարունք ա ըլում։ Շատ են գնում, թե քիչ, ռաստ ա գալի մի մարդ ու հարցնում.— Մի գոմեշ եմ կորցրել, ձեզ ռաստ չեկա՞վ։
Մենձ ախպերն ասում ա.— Քու գոմշի ձախ աչքը քոռ էր։

---

[1] Վասիաթ—կտակ—Ծ. Բ.։
[2] Պատմող Աղասու իսկական խոսքն է—Ծ. Բ.։

— Հա՛, ախպեր։
Միջնեկն հարցնում ա.— Քու գոմշի աղաքի էրկու ատամն ին վեր ընկա՞ծ ին։
— Իսկ և իսկ ըթենց էր։
Պուճուրն էլ հարցնում ա.— Քու գոմեշը եդի ոտիցը կաղո՞ւմ էր։
— Դրուստ որ ըթենց էր,— ասում ա գոմշատերը,— էդ ա դուք իմ գոմեշը տեհել եք, ձեզ մատաղ, ասեք, թե որդի՞ ա։
— Մենք գնում ենք Եվրոպի թաքավորի կուշտը,— ասում են տղերքը,— դուն էլ մեզ հետ արի, ընդի կիմանաս։
Գոմշատերն էլ դրանց ընկերանում ա։ Գնում են։ Շատ են գնում, թե քիչ, դրանց ռաստ ա գալի էլի մի ուրիշ մարդ։
— Տղեք ջան,— ասում ա,— ձեզ մի ձի չի ռաստ էկա՞վ։
— Չէ, ախպեր, զատ չի ռաստ էկել,— թեզ մի թեզ վրա ա բերում գոմշատերը։
Էդ վախտն էն կռնուց թաքավորի մենձ տղեն հարցնում ա էդ մարդուն.— Քու ձիու վրա բեռ կա՞ր։
— Հա, կար։
Մի թայը եղ է՞ր, մի թայն էլ մե՞ղր,— հարցնում է միջնեկը։
— Իսկ և իսկ ըթենց էր։
— Քու ձիու վրա մի կնիկ կար նստած, ինքն էլ էրկու հոքի՞ս,— հարցնում ա պուճուրը։
— Դրուստ ա, ախպեր, մի կնիկ կար նստած, ինքն էլ էրկու հոգիս,— ասավ ձիատերը,— ձեզ մատաղ, ո՞ղդի ռաստ էկավ։
Թեզ կարա՞մ հասնիլ։
— Մենք գնում ենք Եվրոպի թաքավորի կուշտը,— ասում են ախպերտինքը,— դուն էլ մեզ հետ արի, ընդի կիմանաս։
Գնում են հասնում Եվրոպի թաքավորի կուշտը։ Թաքավորը, երբ իմանում ա, թե էդ տղերքն ով են, շատ սիրով ընդունում ա։
Էդ վախտը գոմշատերն աղաք ա կանգնում ու թաքավորի տղերանցից գանգատ անում.— Թաքավորն ապրած կենա, ես մի գոմեշ էի կորցրել։ Սրանք՝ էս ջահել տղերքը, տեհել են ու տեղե ասում չեն։
— Մենք դրա գոմեշը տեհել չենք,— միաբերան ասում են տղեքը։
— Թե որ տեհել չեն, բա խի՞ են նշաննին հնդուր-հնդուր ասում։
— Էդ ո՞նց կլինի, թե որ տեհել չեք, բա ո՞նց էք նշաննին ասել,— զարմացած հարցնում ա թաքավորը։
— Թաքավորն ապրած կենա,— աղաք ա կանգնում մենձ ախպերը,— մենք գալիս տեհանք գոմշի ոտնատեղ։ Ես բրավուրդ արի, որ գոմեշը ճամպու ղրաղովը գնալիս ըրածելով ա գնացել ու միշտ խոտը պոկելիս շլինքը մեկնել ա աջ կռան վրա։ Դրանցից ես գլխի ընկա, որ նրա ձախ աչքը քոռ ա էլել։ Դրա համար էլ խեղճ հայվանը խոտ պոկելիս ա էլել սաղ աչքի կռնուց։
— Ես էլ բրավուրդ արի,— աղաք ա կանգնում միջնեկը,— որ գոմեշը բերնով ամեն հետ խոտը պոկելիս՝ իրեք-չորս խոտ մնալիս են էլել մեջ տեղն անպոկել՝ ցից էլած՝ տնկված։ Դրանից ես հասկացա, որ գոմշի աղաքի էրկու ատամը վեր ընկած ա էլել, ու նրանց արթնակի[3] խոտը մնացել ա անպոկիլ։

---

[3] Արթնակ — դիմաց — Ծ. Բ.։

— Ես էլ,— ասավ պուճուրը,— շատ լավ տեհա, որ գոմշի չորս ոտնատեղից մինը, էն էլ եդինը, միշտ էրես էր, իսկ մնացած իրեքը՝ խոր։ Դրանից պարզ էր, որ եդի մի ոտը չոլախ ա էլել, ու գոմեշը չոլախ ոտը միշտ կամաց ա կոխել։
Ընդիան ձիատերը աղաք ա կանգնում ու ասում.— Թաքավորն ապրած կենա, հմի սրանք կասեն, որ իմ ձին էլ չեն տեհել։ Ամա էդ սուտ կըլի։ Իմ ձիու նշաննին սրանք հենց ասել են, որ թե մի մարդ իր աչքով տեհած չըլի, կարալ չի ասիլ։
— Հաստատ,— դրա ձին էլ չենք տեհել,— ասում են տղերքը,— միայն բրավուրդով նշաննին ասել ենք։
— Թաքավոր,— նրանց խոսքը կտրում ա ձիատերը,— որ իմ ձին տեհած չեն էլել,— բա ոնց իմացան, որ իմ ձիու վրա բեռն ա էլել՝ մի հակը եղ, մի հակն էլ մեղր։ Ձիու վրա էլ նստած ա էլել մի կնիկ, էն էլ երկու հոքիս։ Բա դրանց ասածը խելքի կտրելու բան ա՞։
— Տեսնենք,— ասում ա թաքավորը,— դուք ի՞նչ եք ասում։
— Ես տեհա,— սկսում ա մենձ ախպերը,— ճամպովը մի ձի էր անց կացել։ Ճամպեն շատ ցեխ էր։ Ձին գնալիս տեղը շատ ծանդր էր գնացել ոտնատեղերը շատ խորն ին և վախտ-վախտ դուզ տեղը ոտները սոթ ին տվել։ Ես դրանից գլխի ընկա, որ ձիու վրա բեռն ա էլել ու էն էլ շատ ծանդր։
— Ձին ինչպես ըրևում էր,— ասում ա միջնեկը,— նոր էր անց կացել։ Էդ օրն էլ շոք էր։ Ես տեհա, որ ձիու գնացած տեղովը մի կռնուց մի քանի մեղրաճանճ են թռչում, մի կռնուցն էլ մի քանի մլակնի։ Դրանից ես հասկացա, որ մեղրաճանճերը մեղրի ֆոտի վրա են գնում, իսկ մլակնին՝ եղի ֆոտի վրա։ Դրա համար էլ հարցրի՝ «Բեռի մի հակը մեղր է՞ր, մի հակը ե՞ղ»։
— Մենք որ էկանք սառն ախպրի կուշտ,— սկսեց պուճուր ախպերը,— ես բրավուրդ արի, որ ձին էկել ա, ախպրի կշտին կանգնել։ Ձիուցը վեր ա էկել մի իսան ու կռացել, ջուր խմել։ Նշանուց ես հասկացա, որ էդ իսանը կնիկ ա էլել, ինքն էլ երկու հոգիս, չունքի կռացած վախտը ջուր խմելիս ախպրի կշտի խոտերը դպել ին, ու են էլ մեջտեղը ավելի շատ, իսկ ղրաղնին՝ ավելի քիչ։ Թե որ տղամարդ էր էլել, խոտերը հավասար կճպխեին. ամա կնիկարմատ ա էլել, երկու հոգիս, վադենին մոտիկ, փորը դուս ընկած, որ մեջ խոտերին ավելի ա վրա հարել։ Էդ նշաննու գյորա էլ ես հարցրի. «Վերինը կնիկ էր, ինքն էլ երկու հոգի՞ս»։
— Լավ, լավ,— զարմացած ու ծիծաղելով ասում ա թաքավորը գոմշատիրոջը ու ձիատերոջը,— եբ որ էս մարդիկը ըսենց են ասում, դուք ընչո՞վ եք հաստատում, որ սրանք ձեր ապրանքնին աչքով տեհել են։ Սրամիտք տղերք են և ինչպես ըրևում ա՝ խելոք հորն ու մոր զավակնի։ Լավն էն ա, ախպերտինք, վեր կացեք, գնացեք ձեր կորուստը ման էկեք գտեք։
Ու ըթենցով գոմշատիրոջը ու ձիատիրոջը ճամպա ա դնում։ Ու եդ ա դառնում տղերանցը հարցնում.— Թաքավորի տղերք, հմի դուք ասացեք, թե իմ կուշտը ձեր գալու պատճառն ի՞նչ ա։
— Մեր ըղորմածիկ հերը,— ասում ա մենձը,— մեռնելուց աղաք մի կտակ ա թողել, որի մեջ գրել ա՝ «Ես իմ իրեք որդիներից մեկին զրկում եմ ժառանգությունից»։ Հմի մենք չգիտենք, թե ո՞րս ենք զրկված։ Մեր աշխարի իմաստուն մարդիքը էդ բանը կարացին ոչ հասկանալ։ Նրանց խորհրդով իմ մերը՝ թաքուհին, մեզ ղրկել ա քու կուշտը, իմաստուն թաքավոր, որ դու էդ բանը մեզ հասկացնես, որ մեր սիրտը միամտի և մին մինու վրա խայինություն չունենանք։
Թաքավորն իրան-իրան միտք ա անում. «Էս տղերքը ինձանից հասկացող են ու մինը մնուց լավը։ Ես ինչ իմանամ, թե ո՞րն ա զրկվածը, ո՞րն ա անարժանը»։ Ու նրանց բարձր ձենով ասում ա.— Որդիք, դուք դեռ հլա բարով հազար բարի եք էկել։ Մի իրեք օր դինջացեք, իմ տունը կացեք, մեր աշխարի, մեր գործերի հետ ծանոթացեք։ Ես հմի շատ գործ ունեմ,

կկատարեմ ու իրեք օրից եղը ձեզ կհասկացնեմ, ձեր հոր կտակի միտքը, վեր կկենաք, կերթաք։
Թաքավորը կանչում ա իրան նազիրին ու նրան թամբահ անում, որ նոր եկած ղոնախն ու թաքավորի տղերանց համար մի լավ ճաշ պատրաստել տա, կանչի նրանց թայ-թուշին[4] և նրանց մի լավ քեֆ շանց տա։ Նազիրը կանչում ա թագավորի խոհարարին, բաղմանչուն և չոբանին և նրանց թամբահ անում,— Այսօր մի լավ, չտեսնված ճաշ պտի պատրաստեք նոր եկած ղոնախնու համար։
— Դուն՝ խոհարար, ամենաընտիր ալրից հաց թխիլ կտաս և ամենահամով կերակուրներ կպատրաստես, դուն՝ բաղմանչի, քու մառանից ամենալավ գինին կբերես, իսկ դուն՝ չոբան, մի ամենալավ ամլուկ գառը կտաս խոհարարին կերակրի համար։
Ամեն ինչ ժամանակին պատրաստվում ա։ Նազիրն էլ ճաշի ա կանչում իրանց քաղաքի բոլոր առաջավոր, ասող, խոսող, խելքով ու շնորքով, բոյով ու բուսաթով, ուսումով հայտնի երևելի ջահել տղերանց, որ նորեկ հյուրերի հետ քեֆ անեն, նրանց ուրախացնեն։
Ճաշի են նստում։ Աչքդ էն բարին տենի, թե ինչ սուփրա ա բացվում նրանց աղաք։ Մարդ ընդի պտեր ըլիլ, որ բերնի ջուրը գնացել էր։ Ասսու տված ամեն բարին ընտի կար։
Դեռ նոր ճաշի նստած՝ թաքավորի տղերանցի մենձ ախպերը, հենց որ մի էրկու թիքա հաց ա կտրում, ասում ա.— Էս հացի տերը քրդի տղա ա։
Միջնեկ ախպերն էլ, որ մի էրկու թաս գինի ա խմում, էն էլ ինչ թավուր զլզլան, անապակ, սպիտակ գինի, ասում ա.— Էս գինու հետ մարդի արուն կա խառը։
Պուճուր ախպերն էլ, երբ որ կերակուրն աղաք են բերում, ամլուկ գառան մսից ու հազար ու մին թեր ու այանքով շինած, հենց որ մին էրկու թիքա ուտում ա, ասում ա.— Էս գառան մսից շան մսի համ ա գալի։
Նազիրը նրանց ասածընին անգաջումը պահում ա ու ճաշից եղը գնում ա թաքավորի կուշտը ու նրան ասում թե.— Բա չես ասիլ քու ղոնախնին ըսենց-ըսենց բաներ ասին։
Թաքավորը շատ զայրանում ա ու թաքավորի տղերանցը կանչելով հաթաթա տալի, թե որ իրանց ասածը հաստատել չեն, ինքը նրանց գլուխը տալ կտա։
— Հեռու տեղից էկել եք իմ կուշտը բանի, իմ հացն ուտում եք, իմ պատիվն առնում ու ըդթավուր գեշ-գեշ բաներ ասո՞ւմ։
— Թաքավորն ապրած կենա,— ասում ա մենձ ախպերը,— կանչի քու մորը, քո բաղմանչուն ու քու չոբանին ու նրանց հարցրու, թե մեր ասածը սուտ դուրս գա, մեր գլուխը տալ տուր, թե չէ՝ դրուստ կլինին— ի՞նչ անենք ճշմարիտն ասելու համար, կարծեմ, մեզ չես պատժիլ, ինչ դրուստ ա, դրուստ ա։
Թաքավորը կանչում ա իր մորը և ասում.— Նանի, մեր նոր էկած ղոնախնին՝ թաքավորի տղերքն իմ մասին ասել են, որ ես քրդի տղա եմ։ Բեր դու դրուստն ասա, թե էդ բանը զրպարտություն կլինի, ես էն տղերանց հախիցը կգամ։
— Որդի,— ասավ մերը,— ծերացել եմ, ոտս գերեզմանումն ա, ես էլ սուտ չեմ կարա ասիլ,— մի քանի տարի էր պսակված էի քու հոր՝ ըղորմածիկ թաքավորի հետ ու նրանից որդի չունեի։ Մի հետ թաքավորը իրա ղոշունով գնաց կռիվ՝ հեռու տեղ։ Ես էլ, էի ջահելություն, սեր արի մի քուրդ չոբանի հետ, որ մի
շատ սիրուն տղամարդ էր։ Ու դուն նրանից բըհամ էկար։ Գրեցի թաքավորին աչքալիս, ու երբ որ նա եդ եկավ, քեզ հրատարակեց իրան թագաժառանգ։ Քեզ շատ սիրեց ու խնամքով մենձացրեց։ Խեղճը հենց գիտեր դու իրանից ես։ Էս բանը գիտեր վերևն աստոծ, ներքևը՝ ես։

---

[4] Թայ-թու շ — հասակակից տղերք—Ծ. Բ.։

Հմի, որդի, որ էս ջահել տղերանց արինը չընկնեմ, բանը բաց արի։ Ուզում ես ինձ մորթի, ուզում ես քերթի.
— Լավ, նանի, գնա քու բանին։
Կանչում ա բաղմանչուն ու չոբանին ու նրանց հարցնում։
Բաղմանչին ասում ա.— Եբ որ նազիրն ինձ ասավ, որ ես ամենալավ գինին բերեմ, ես էլ ունեի օխտը տարեկան պահած սպիտակ գինի, ձեր բաղի ամենալավ խաղողից քամած, ընթավուր գինի էլ քու մառանում չկա, էն մի կարասն էր, որ բաց արի։ Թե որ դրուստը հարցնում ես, դրանց ասածը ճշմարիտ ա։ Ժամանակին, եբ որ ես ջգուվի ամենալավ խաղողը քաղել ի տվել, ածել հնձանը, մի ղոչաղ մշակ ունեի, նրան ասի որ տրորի։ Տրորելու վախտը նա ձեն ածավ.— Վա՛յ, էս ի՞նչ էր, ոտս կտրեց։
Ես էլ վրեն ջգրվեցի ու ասի.— Ի՞նչ էս գոռում, տրորի, տրորի։ Մի քիչ վախտից եդը տեհա, որ էն աժդահա մշակը թիլացավ։ Նրան հանել տվի, տեհա դրուստ որ ոտը կտրած, սաղ կրունգը գնացել էր, խեղճն արյունաքամ էր։ Մտիկ արի կարասի մեջը, խառնեցի, գտա մի կոտրած ցաքատի կտոր, որ էն խեղճ մարդի ոտը կտրել էր։ Գինին ամանեցի։ Մի քանի վախտից եդը համը տեհա— էդ գինու նման համով էլ գինի չկար մեր մառանումը։ Հմի էն կարասն էր, որ էսօր ճաշի վախտը քու ղոնախնու համար բաց արի։
Թաքավորի մենձ չոբանն էլ էս պատմեց.— Երբ որ նազիրն ինձ ասավ, որ սուրուիցը ջգովի քոք ու ամլուկ գառը բերեմ, ես էլ մի եթիմ գառն ունեի, որ շատ խնամքով պահել ի, մենձացրել ու շատ քոքացրել։ Էդ գառը որ ծնվեց, մերը թեղով սատկեց, ինքը մնաց եթիմ։ Ես էլ նրան միշտ ամենալավ ու ամենահզոր կաթ ոչխարնուն ի ծծացնիլ տալի ու տանը պահում։ Մի օր էլ հանդից էկա տեհա, որ մեր զալում ղանջղ[5] կողքի վրա խտոր ընկած իր թուլինուն ծծացնել ա տալի. էդ գառն էլ գնացել ա թուլենու հետը ընկել ու նրանց մոր՝ մեր ղանջղ շան՝ ծիծը ծծում ա։ Հալբաթ էդ ա, դրանից ա, որ ասել են. «Գառան մսից շան մսի համ ա գալի»։
Թաքավորը եդ ա դառնում ու էդ տղերանցը հարցնում.— Բա դուք ո՞նց իմացաք էդ բաները։
Թաքավորն ապրած կենա,— ասում ա մենձ ախպերը,— ձեր հացը շատ իստակ էր ու լավը, ամա խմորը միախաշի ա էլել, ու դրանից էլ հացն անեկ էր, երեսը բշտած։ Առհասարակ քրդերն են միախաշի ու անեկ հաց անում։ Նրանց հացը մինչի անեկ ու բշտած չըլի՝ ըլիլ չի։ Հենց դրանից էն խոսքը լեզվիս ծերից թռավ ու ես էդ բանն ասի։
— Ես էլ, երբ գինին ձեռքս առա,— մեջ մտավ միջնեկը,— մտիկ արի ու տեհա, որ գինին շատ թամուզ ա ու իստակ ա, շատ պարզ էր ու անուշ համ ուներ։ Ամա բերանումս մի ային-օյին արնի համ առա։ Մին էլ խմելիս թասը ժաժ տվի, տեհա, որ գինու ըրեսին կարմիր կաթիլնի են լող տալի. բրավուրդ արի՝ մարդի արին էր։ Դրա համար էլ էդ բանն ասի։
— Գառան միսը շատ չաղ էր ու լավը,— վրա բերեց պուճուրը,— ամա համը մի ղայդի էր, ինձ դիր չեկավ, շըմփըլըմփահամ էր։ Մի թիքա էլ որ ձեռս առա, տեհա ձեռիս միջին լփրձնում ա՝ փսլնքոտում ա։ Առհասարակ հալալ ապրանքի միսն ըթենց չի ըլիլ, փսլնքոտիլ չի։ Ու հենց էդ պատճառով էլ էն խոսքն ասի։
— Ես ձեզ բաշխում եմ, որդիք,— ասավ թաքավորը,— միայն սրանից ետը զգուշ կացեք, որ ձեր խոսքերով բռնվեք ոչ։ Գնացեք։ Էգուց կգաք առանձին իմ կուշտը։ Ես ձեզ իմ մինուճար աղջկա հետ կծանոթացնեմ։ Նրա հետ մի քիչ խելք-խելքի կտանք, կչափվենք։
Թաքավորն ուներ մի մինուճար աղջիկ, որ նրա թագի ժառանգն էր։ Էդ աղջիկը մարդու էրես չէր դուս գալի։ Նա ապրում էր ջոկ՝ իրան պալատում։ Տերության երևելի մարդիկ հալուսըհալ

[5] Ղանջղ—էգ շուն—Ծ. Բ.։

նրա էրեսը տենում ին։ Ասում ին, որ նա իմաստուն ա, օձի խելք ունի ու ոչ մի բան նրա ձեռից պրծնում չի։
Թաքավորը, նեղն ընկած վախտը, նրա խորուրդն ա հարցնում ու շատ անգամ նրա խոսքով նստում վեր կենում։ Էդ տերության բոլոր մարդիքը համոզված ին, որ նա աշխարի տակ ու գլուխը գիտի, նրանից ծածուկ ոչինչ չի մնա։
Թաքավորը գնում ա իր աղջկա կուշտը ու նրան պատմում խարավորի տղերանց բանը ու թամբահ անում, որ նրանց հոր կտակի միտքը բաց անի, թե կարա՝ իմանա, որն ա անարժանը։
Վատա դրած իրեք օրից եդը թաքավորը տանում ա իրեք ախպորտանցը իր աղջկա կուշտը։
Թաքավորի աղջիկը դուս ա գալի իրա օթախիցը մի ձեռին բան բռնած ու քողն երեսին։ Քողը վեր անում, էրեսը շանց տալի։ Նրա երեսի շափաղիցը թաքավորի տղերքը աչքները խուփ են անում։ Հենց իմանում են՝ ըրեգակ դուս էկավ։
Թաքավորի աղջիկը իրա ձեռի բանը, սինու մեջ դրած ու շորով ծածկած, գնում ա սեղանի վրա, թաքավորի տղերանցը բարևում ու նրանց ասում.— Մեր պատվական ղոնախնի, թաքավորի տղեք, ես ըստեղ ծածկած մի բունքլըն[6] եմ բերել։ Թե դուք կասեք իմ բունքլըն ի՞նչ ա, ես ձեզ կհասկացնեմ ձեր հոր կտակի միտքը։
Մենձ ախպերն ասում ա.— Էդ ինչ-որ որ ա, կոշտ ա։
Միջնեկն էլ ասում ա.— Դրուստ ա կոշտ ա, ամա մի քիչ պուլիկ ա, ինքն էլ ձու ա։
Պուճուրն էլ ասում ա.— Դրուստ ա ձու ա, ձվի ձև ունի, ռանգն էլ դեղին ա, ու ինքն էլ ոսկուց ա։
Խնդրում են թաքավորի աղջկանը բունքըլը բաց անել, ծածկոցը եդ են քաշում, տենում՝ դրուստ որ ոսկե սինու մեջ մի ոսկե ձու դրած։
Թաքավորի աղջիկն ասում ա.— Դե հմի նստեցեք, հերթն ինձ հասավ։
Ու թաքավորի աղջիկն սկսում ա էս պատմությունը.— Մի վախտ գարունքեց, մի քաղքից մի թաբուն քոչվոր աղջկերք գնում են հանդը բոխու զոխ քաղելու։ Եղանակը գարունք, սար ու ձոր ծաղկով զարթարված, իրանք էլ նորահաս ջահել աղջկերք, սկսում են երգել, խաղալ ու զվարճանալ։ Լիզունիրը բացվում ա, սիրտները թրթռում։ Որը ծաղիկ ա քաղում ու փնջում, որը բոխու զոխ, որն էլ թոլ ա ըլում կանաչ խոտերի մեջ։ Դրանցից մինը ընկերներից ջոկվում ա ու հավեսով ծաղկընոու[7] եդևից ընկած ու ղոխ քաղելով շատ հեռանում ա, մտնում մի ղոբնի[8] մեջ։ Մին էլ գլուխը վեր ա քաշում տենում, որ ըտտի մի չոբան ոչխար ա ըրածացնում։ Եդ ա մտիկ անում, տենում, որ ընկերնին կան ոչ։ Մնում ա շշկլված կանգնած։
Չոբանը տենում ա՝ ըհը ըտտի իր ըղաքին կանգնած մի սիրուն աղջիկ, քեֆը գալիս ա, սիրտն էլ ցնծում ա։ Վազում ա, բռնում էդ աղջկան ու ուզում ա խայտառակ անի։
Աղջիկն ըղաչանք ա անում ու ասում.— Չոբան ախպեր, բեր դուն էդ բանից ձեռը վեր կալ։ Ես ասսու աղաք ուխտ ունեի դրած, որ անարատ մնամ՝ սուրփ սրտով իմ թագն ու պսակին արժանի ըլիմ։ Ով որ էլ ինձի ուզի, ինչ տղա էլ ինձ հետ պսակվի, ես քեզ հաստատ խոսք եմ տալի, որ էդ պսակի առաջին քշերը՝ էլ ըսենց մաքուր ու անարատ գամ քու կուշտը։
Չոբանն էդ աղջկա խոսքին հավատում ա ու բաց թողնում։
Աղջիկը գալիս ա ընկերնուն գտնում ա, նրանց հետ տուն եդ դառնում։
Անց ա կենում մի քիչ ժամանակ։ Մի լավ տղա գալիս ա էդ աղջկան ուզում ու հետը պսակվում։ Հարսանիքից եդը՝ առաջին քշերը, եբ որ պսակված էդ փեսեն ու նրա հարսը գնում են իրանց օթախը, աղջիկը բաց ա ըլում ու էդ տղին իր գլխի եկածը պատմում, եդո ասում ա.—

---

[6] Բունքլըն — հանելուկ—Ծ., Բ.։
[7] Ծաղկնու — ծաղիկների — Ծ. Բ.։
[8] Ղոբնի — հովիտ—Ծ. Բ.։

Ոտիդ ու գլխիդ մատաղ, իմ տեր, իմ թագն ու պսակը ես չոբանին հաստատ խոսք եմ տվել, ուզում չեմ իմ խոսքը կոտրել։ Բեր դուն ինձ բաց թող, գնամ նրա կուշտը։ Թե ինձ սիրում ես, թողալ մի, որ ես իմ խոսքը գետնին գցեմ ու մի հասարակ չոբանի կշտին անազնիվ ու ստախոս դուս գամ։
— Գնա, ասում ա մարդը,— երբ որ դու հաստատ խոսք ես տվել, քո խոսքի տերն ես, չոբանն էլ քեզ հավատացել ա ու ընթավուր վախտը քեզ բաց թողել, գնա քու ազնիվ խոսքը կատարի։
Ու անարատ բաց ա թողնում իր նորահարսին։
Ըստի թաքավորի աղջիկը խոսքը կտրում ա ու եդ ա դառնում մենձ ախպորը հարցնում.— Դրուստն ասա, թաքավորի մենձ տղա, դուն որ ըլեիր էն տղի տեղը, քու նշանածին, քու նորահարսին, քողն էլ էրեսին բաց կթողնեի՞ր։
— Իհարկե, ուղուր սրտով բաց կթողնեի, եբ որ չոբանը նրան հավատացել ա, ու նա էլ հաստատ խոսք ա տվել, ես չէի թողնիլ, որ նա իրա խոսքը ստի։ Էն տղեն նորափեսեն ըթենց էլ պտի աներ, լավ տղեն, ազնիվ տղեն ուրիշ կերպ չէր անի։
Թաքավորի աղջիկը սուս ա կենում ու շարունակում.— Էդ աղջիկը էդ նորահարսը քողն էրեսին քաղքից դուս ա գնում։ Քաղքի ղրաղին ա ըլում չոբանի տունը, գնում ա դուռը ծեծում, չոբանին դուս կանչում ու ասում.— Չոբան ախպեր, ես իմ խոսքի տերն եմ, էս քշեր պսակվեցի, իմ նշանածից իրավունք առա ու անարատ էհա քու կուշտը, հմի մնացել ա քու խղճմտանքին, թե ուզում ես, ինձ հողեցիոքի կորցնել, թե ուզում ես, որ իմ մարդը ամեն օր ինձ էրես-ծեծանք անի, թե ուզում ես, որ ես անբախտ ըլիմ, ամեն օր աղի արտասունք չափեմ, կատարիր քու կամքը։
Չոբանը զարմանում ա էդ նորահարսի ու իր մարդի՝ նորափեսի ազնվության վրա, սիրտը փուլ ա գալի ու նրան ասում.— Դուն իմ քիրն ես, իմ բերնի սրբություն ու օրենքն ես, գնա քու մուրազին հասի, քու թագն ու պսակին անարատ հորով արժանի կաց։ Սրանից եդը դուն իմ քիրն ես, քու նշանածն էլ իմ ախպերը։ Իմ դուռը, ոնց որ քու հոքու ախպոր դուռը, միշտ բաց կըլի քու աղաք։
Ասում ա չոբանն ու իրան հոքու քըվոր ճակատը պաչում ու բաց թողնում։
Ըստեղ թաքավորի ախչիկը իր պատմությունը կտրում ա ու եդ դառնում միջնեկ ախպորը հարցնում.— Դրուստն ասա, թաքավորի միջնեկ տղա, դուն որ ըլեիր էն չոբանի տեղը՝ էն զիզիկ նորահարսին, քողն էլ երեսին, բաց կթողնեի՞ր։
— Իհարկե, ինչ խոսք կա, որ ուղուր սրտով բաց կթողնեի, եբ որ նորահարսն ու փեսեն էնքան ազնիվ ին, որ մինն իրա հաստատ խոսքի տերն էր, մեկելն էլ իր նշանածի խոսքը չկոտրեց, բա չոբանը հո քարասիրտ չէ՞ր, էլ ո՞նց պտեր անիլ։ Չոբանը, ազնիվ չոբանը ուրիշ կերպ չէր անի։
Թաքավորի աղջիկն էլի սուս կացավ ու շարունակեց.— Էդ նորահարսը չոբանից որ հեռացավ, սկսեց ափալ-թափալ վազել, որ թեղ գա իրան փեսին՝ իրան թագն ու պսակին հասնի։
Ոտներին զոռ էր տալի, ամա սիրտն թուլանում էր։ Եբ որ եկավ հասավ քաղքի մեջ տեղը, մի քուչով անց կենալիս նրան ռաստ էկան մի քանի լոթի տղերք, որ քեֆ ին անում։ Էդ հարսն ուզեց նրանցից փախչի, ամա նրանք վազեցին ու նրան բռնեցին։ Մինն ասավ.— Յո՛ւֆ, ինչ լավ ֆորս գտանք։ Քեֆներս հմի ավելի չաղ կլի։ Ու ուզեցին տանեն խայտառակ անեն։
Նորահարսը քողն էրեսին նրանց ոտներն ընկավ ու էսպես խոսեց.— Ախպերտինք, ձեր ջանին ղուրբան, ձեր ոտին մատաղ, թողեք մի էրկու խոսք ասեմ ու եդո ինչ ուզում եք արեք։
Ու նա պատմեց իր գլխի անց կացածը, իր մարդի ու չոբանի վարմունքը ու ավելացրեց.— Թե որ չոբանը իր բռի տեղը ինձ չխնայեց, բա դուք խելոք, հասկացող տղերք, ինձ չէիք խնայի՞լ։ Յա ինձ ըստեղ սաղ-սաղ թաղեցեք, յա թողեք գնամ մուրազիս հասնեմ։ Որըդ քիր չունեք— ինձ

քիր հաշվեցեք, որքդ էլ ունեք՝ էրկուսը համարեք։ Ու էդ տղերքը խղճացին նորահարսին ու բաց թողին։
Ըստի թաքավորի աղջիկը իր պատմության թելը կտրում ա ու պուճուր ախպորը հարցնում.— Դրուստն ասա, թաքավորի պուճուր տղա, դու որ ըլեիր էն տղերանց տեղը էն սիրուն նորահարսին բաց կթողնեիր։
— Չէ՛, բաց չէի թողնիլ. առաջինը ես զարմացել եմ էն նորափեսի վրա, որ սարսաղություն արավ, իր նորահարսին բաց թողուց կես քշերին գնալու չոբանի կուշտը։ Չոբանն էլ սարսաղություն արավ, իրան ոտով էկած ֆորսը ձեռից բաց թողուց։ Էն տղերքն էլ հո, լոթի տղերք ին, սարսաղություն արին, որ նրան բաց թողին։ Ես էդ բանը չէի անիլ։ Հլա մի կամքս կկատարեի, ընդուց եդը ի՞նչ ուզում էր՝ ըլեր։
Թաքավորի աղջիկը վեր ա կենում ու էդ տղին ասում.— Դու ես, որ զրկված ես ժառանգությունից։ Դու խառնակ արուն ունես, որ քեզ ըթենց ա խոսացնել տալի։ Դու էն թագի տակին երդում կերած հոր ու մոր հալալ տղեն չես։ Քու աշխար գալում յա հերդ ա խափված, յա մերդ, յա թե չէ՝ շատ կարելի ա՝ էրկուսը միասին։ Հերդ էն չոբան ազնիվ տղեն, իր խոսքը կոտրողը չէր ըլիլ. էլ ընչի՞ պտեր նրա մեջքը կոտրիլ։ Հլբաթ, նրան մի ուրիշը խափել ա ու նրա անումով խափել քու մորը։ Հենց էդ բանը կըլեր խեղճ թաքավորի մեջքը կոտրած։
Էս որ ասավ, թաքավորի աղջիկը դեռ խոսքը չէր վերջացրել, թաքավորը, որ միչի էդ վախտը սուս ու փուս անգաջ էր դնում, տեղից վեր կացավ ու իր աղջկա ճակատը պաչեց։
— Ապրիս, աղջիկ ջան, անումիդ ղուրբան, էդ էր որ գտար, թե ո՞վ էր զրկված ժառանգությունից։
Էն թագավորի մենձ տղեն էլ վեր ա կենում տեղից էս թաքավորի ձեռքը պաչում ու խոնար ասում.— Տեր թաքավոր, թե որ համիաթ կտեսնես, խնդրում եմ քու աղջկա ձեռքն ինձ տաս։ Թաքավորը հարցնում ա աղջկա կամքը։ Աղջիկն էլ, որ շատ հավանած ա ըլում մենձ ախպորը, տալիս ա իր համաձայնությունը։ Թաքավորն իր ձեռքով նրանը հարսանիք ա անում ու մենձ բաժինքով ու դուժինքով ճանապար դնում։ Էլ ինչ քեֆ։ ինչ ուրախություն։ Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրադին[9]։

[9] Ու երբ մեր շնորհքով պատմող, կես գրականական ու կես ժողովրդական լեզվով խոսող, քիչ ապրած, սակայն շատ բան փորձած, ման եկած, լսած ու տեսած բեմուրադ Աղասին, իր էս վերջին հեքիաթը վերջացրեց, մենք արդեն ձորը բարձրացել էինք ու հասել Օձուն։ Օրը լիսացավ, մեր հեքիաթների առաջին գիշերն էլ վերջացավ։— Ծ. Բ.։